

Կ-1002-06.05.2016-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**ՕՐԵՆՔԸ****«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ****ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16.1-ին հոդվածի չորրորդ մասը «(բացառությամբ» բառից հետո լրացնել «ներմուծման և արտահանման հարկային հայտարարագրերի,» բառերով:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի ութերորդ մասի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) մաքսային մարմինը տեղեկություններ է տրամադրում «բաց թողնում՝ ներքին սպառման համար», «վերաներմուծում», «արտահանում», «վերաարտահանում». «ժամանակավոր ներմուծում», «վերամշակում՝ մաքսային տարածքում», «վերամշակում՝ ներքին սպառման համար», «ժամանակավոր արտահանում», «վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս», «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով կատարվող ձևակերպումների, այդ թվում՝ գանձված հարկերի, մաքսատուրքի և պարտադիր այլ վճարների վերաբերյալ:»:

Հոդված 3. Օրենքի 25-րդ հոդվածի երկրորդ մասում՝

- 1) առաջին նախադասության «հարկային հաշվարկներ» բառերից հետո լրացնել «, հայտարարագրեր, տեղեկություններ, հաշվետվություններ» բառերով.
- 2) երկրորդ նախադասության «հաշվարկների ճշտման» բառերը փոխարինել «հաշվարկների (հաշվետվությունների, տեղեկությունների, հայտարարագրերի) ճշտման» բառերով, իսկ «(հայտարարագրեր» բառից և դրա համապատասխան հոլովածևից հետո լրացնել «, տեղեկություններ, հաշվետվություններ» բառերով և դրանց համապատասխան հոլովածևերով:

Հոդված 4. Օրենքի 25.2-րդ հոդվածի երկրորդ մասում՝

- 1) ««ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով» բառերը փոխարինել ««բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով» բառերով.

2) «մաքսային արժեքի» բառից հետո լրացնել «և ներմուծման հարկային հայտարարագրերում նշվող ավելացված արժեքի հարկի հարկման բազայի արժեքի հանրագումարով» բառերով:

Հոդված 5. Օրենքի 34.1-ին հոդվածը «հաշվարկներում» և «հաշվարկների» բառերից հետո համապատասխանաբար լրացնել «, հայտարարագրերում» և «, հայտարարագրերի» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ առաջինից երկրորդ ընթացմամբ քննարկման ժամանակահատվածում ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
ՀՀ կառավարություն	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը «հաշվարկներ» բառից հետո լրացնել «, հայտարարագրեր» բառով:	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող փոփոխությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը «հաշվարկներ» բառից հետո լրացվել է «, հայտարարագրեր» բառով:
ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի առաջարկվող խմբագրությունում «քննչական կոմիտեի» բառերը փոխարինել «ազգային անվտանգության» բառերով:	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի առաջարկվող խմբագրությունում «քննչական կոմիտեի» բառերը փոխարինվել են «ազգային անվտանգության» բառերով: